ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնս պատիւ ունի յայտնել, որ արդէն զուրս եկան մամուլի տակից և Ծախում է են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԳԻԼԶԻՐ-ԱՏՈՒՈ. ԹՈՎՄԱՍ ԵՂԻՇԷ ՏՆԱՎԸ, տպ. երեխաների համար Պատմէր, թարգ. որ. Ս. Տէր-Մարիոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵԻ ԵՒ ՆՈՐԱՆ ՀՆՉԱԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Ստարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Թիֆլիսի առևտրական վարչութիւնը յայտնում է Թիֆլիսի պ. պ. առևտրականներին, որ 1) ապրիլի 24-ին նշանակված առևտրական վարչութեան պաշտօնական անձանց ընտրութիւնները ՉԸ ԿԱՅԱՑԱՆ, որովհետև բաւականաչափ առևտրականներ ներկայ չէին և 2) որ նոյն պաշտօնական անձանց ընտրութիւնները ՆՈՐԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԵՆ ՄԱՅԻՍԻ 18-ին, առաւօտեան 11 ժամին:

1—3

Մի ՇՈՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիւզօր» անունով, կորաւ Ալէքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը: Պանողին խնդրում են հասցնել Զուբալովի տան, կօնդիտէր Կելբերի մագազինից վերև գտնված Պօլտարացկու բնակարանը, Ստեփան Նորեանցին օրինաւոր վարձատրութեամբ:

3—3

УПРАВЛЕНІЕ

Поти Тифлисскаго участка Закавказской желѣзной дороги доводитъ до всеобщаго свѣдѣнія, что съ 10-го сего мая возстановляется движеніе пассажирскихъ поѣздовъ между станціями Тифлисъ и Мцхетъ, но съ пересадкою у станціи Авчалы Росписаніе отхода поѣздовъ изъ Тифлиса—прежнее, за исключеніемъ поѣзда № 8, (пятичасоваго) который до увѣдомленія отправляемъ не будетъ.

1—1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Փօրլենվիչ ներքին հ., Բօտիանանց կանանց և երեխաների հ., Գիւշարեանց խրուրգիական և աչքերի հ., Շանտմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խրուրգիական հ., Վ. զօրով վիներական և բոցաղի հ., Բէյլս աչքի հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կարանոգլեանով, Լիսիցկի և Վերմիշև ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցկի Բուգկօվսկի ներքին հ., Շանէյմրօսկի վիներական և կաշու հ., Ատուռաձատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրով վիներական և բոցաղի հ., Բօտանանց կանանց և երեխաների հ., Լիսիցկի և Վերմիշև ներքին հ., Գիւշարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խրուրգիական հ., Կարանոգլեանով և Լիսիցկի ներքին հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շանէյմրօսկի և Ատուռաձատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցկի և Վերմիշև ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաևվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էկզկրրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնարոյժ Օրբելյան ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկարարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գլխաւոր Լիսիցկի:

ՁԵԳՈՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տուն՝ սրանով յայտնում է, որ գնումներին մինչև նոր փոփոխութիւնը վերնարում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիներին	4½%
մինչև պահանջելը	4½%
2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով	6%
9 ամսով	6½%
1 տարով	7½%
1½ տարով	8%
2 տարով և աւելի	8½%
3) Մանաւոր գնումներին առաջին կարգի պայ. ունեցողներին	9%
Գումարներ տալու ժամանակ վերցնում է մի ամսվայ ընթացքում	10%
« շաբաթվայ	9%

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՈՎՆԵՐԻ տանը, Ակէքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանգցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

1—3 (2)

ԵԳՈՐ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յեռաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ակէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ

ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաներ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քարտաքային փոստայով, բանել իրան թէ ինչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները ստացած չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց Ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիսու Թանդրդեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիսու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հալաթարի Ս. Մինաս եկեղ. Եզմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Նամբոուեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հալաթարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գոգոլի, թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔՈՎ,

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՈՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

III

ԶԱՒԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, ԲԱՐԵԿ Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵՍՆԻ կը պատմէ պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ բօսանքներ, ի միջի այլոց «ԴՈՇԵՐԸ ԳՐԵՆԱԴԱՑՈՒՄ» երաժշտութիւն Շիֆֆի:

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՅՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

3—5

ՆԻՒ-ԷՕՌՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարերու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բառական բլայով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլակերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտ գոնե համրելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Յօրքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ընտանեկի փողոցն, Զուբալովին տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ Նորքաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կամ տարակուսացուցնեն սեպհական մերոնց լաւութեան անուն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուզելու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Գ. Նեյդլինգերъ. Тифлисъ.

Գ. Նայդլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսստանի և միջին Եւրոպայի Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 14 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխիլսոնի Типографія А. А. Михельсона